


Արապեան, որուն յաջորդեց Շորէնի Մահերգը, զոր նուագեց յայտնի դաշնակա՜ար Բրոֆ. ուհի Օր. Մ. Պոտուրեան: Յաջորդաբար խօսք առին Ճարտ. Արմէն Սարեան (խաչերէն), բժ. Մանուկ Խանգէկեան և Պ. Չափրատ: Ճառախօսներուն կեդրոնական գաղափարն էր տեսնել Ապրիլ 11/24-ին զոհաբերութան մէջ այն հոգեկոտ և անդիմադրելի ուժականութիւնը որ համայն չայ ազգը կը մաքնիսացնէ ընկրկում չճանչցող գերբնական ցաւի մը մէջ: Բրոֆ.

ուհի Օր. Մ. Պոտուրեան յաջորդաբար նուագեց Շորէնէն, Թալիափիէգրայէն, Ալաէնիցէն և երգեց Կրէչխանինովէն, Կոմիտասէն (Կուռնկը), Մելիքեանէն (Վարդը), խոր տաղաորութեամբ համակելով ներկաները: Արտասանութիւններ ըրին տիկ. Քնարիկ Եղիկեան (Սիամանթոյի Մօր մը Երազը) և բժ. Բադրատ Եղիազարեան (Ա. Ահարոնեանի Յարգանք քեզը), երկուքն ալ մեծ ձեռնհասութեամբ:

Ա. Ս.

ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՅ

ԳԵՐ. Հ. ՅՈՎՀԱՆ Վ. ԱԻԳԵՐԵԱՆ



Տարւոյս Մայիսը իր վարդերուն հետ ամենախորին սուգ մըն ալ բերաւ Մխիթարեան Միաբանութեան, որ Գերյ. Հ. Յովհան Վ. Ապերեանի մահով կը կոր-

սընցնէ իր մեծ զաւակներէն մէկը, պատկառելի իր գիտնականի տաղանդին և լայնածաւալ հմտութեան համար՝ ազգային ու միջազգային գրականութեան մէջ, ինչպէս իր սրբակրօն ցայտուն կենցաղին:

Ծնած 1877ի Հոկտեմբեր 3ին Գաղատիոյ մէջ, հազիւ տասնամեայ՝ սրբութեան ծառայութեամբ տեսչափաւ՝ կը թռչէր Ս. Ղազար Մխիթար Աբրահամ զաւակներու Կարգը մտնելու, նուիրուելով ամբողջապէս Աստուծոյ Ս. Սեղանին, ծառայելու համար իր ազգին:

1895ին ինքզինքը կը կապէր Մխիթարեան Միաբանութեան՝ մշտնջենաւոր ուխտով, և 1899ին կը ձեռնադրուէր քահանայ Գերապայծառ Իգնատիոս Արքեպս. Կիւրեղեան Աբրահամ ձեռքով:

Ու այնուհետեւ իր ամբողջ վանական կեանքը շուրջ կէս դար անընդհատ նուիրում մը եղաւ ուսման և գիտութեան ասպարէզին և հոգիներու փրկութեան գործին:

Մեր տոհմային գիտութեանց իր լայն

պաշարով՝ քահանայական ձեռնադրութեան օրէն արդէն սկսաւ իր ուսուցչական դասախօսութիւնները՝ Հայ լեզուի, գրականութեան և պատմութեան, նախ վանքի աշակերտութեան և յետոյ Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանին մէջ, ուր ապա կարգուեցաւ Ուսումնապետ:

Յատուկ ձիրք և սէր ունենալով լեզուագիտական ու բանասիրական ուսումններուն՝ նախ երեւելի լեզուագէտ Ուսուցչ. Emilio Teza-ի աշակերտեցաւ, յետոյ 1906-1909 տարիներու ընթացքին կատարեալագործեց այդ մասնագիտութիւնը Մոնաքոյի և Պերլինի համալսարաններուն մէջ:

1909ի ամառը վերադարձաւ վանք ու սկսաւ իր գրական կեանքը դասախօսելով միանգամայն պատմական և մատենագրական ճիւղերը: Նոյն չրջանին մասնակցեցաւ մեր վանքին և վարժարաններու վերահսկող Ուսումնական Ժողովին՝ խորհրդականի և քարտուղարի պաշտօնով (1909-1912), ապա 1912ին անուանուեցաւ Խմբագրապետ «Բաղմալէյ» ի և բոլորեց երկամեայ բեղուն չրջան մը. այնուհետեւ կոչուեցաւ Միաբանութեան կեանքի մեծագոյն գործունէութիւններուն և վարչական պատասխանատու պաշտօններու. այսպէս 1916 Մարտ 30ին ընդհանուր քարտուղար, պաշտօն՝ որուն մէջ կը վերահաստատուէր 1921ին և կը տեւէր մինչեւ 1929ի Միաբանական Ընդհ. Ժողովը, որ զինքը ընտրեց Ընդհանուր Աբրայ վեցամեայ չրջանի համար (1929-1935):

Դարձեալ նշանակելի է որ 1916-1918 երկամեակին վարեց վանքի աշակերտաց ձեռնադրութիւնը և իր զանազան գործառնութեանց կարգին՝ բերաւ իր մեծ բաժինը Մուրատեան վարժարանի չէնքի դնումին, հիմնարկութեան և ուսումնական կազմակերպութեան մէջ 1928ին՝ երբ շուրջ 60 տարուան դադարէ մը վերջ Փարիզի (Սեւր) մէջ կը վերաբացուէր յիշեալ վարժարանը:

Իր կեանքի վերջին տարիները 1936-1947 ուսման, հոգիներու առաջնորդութեան և մարդասիրական գործերով զբաղեցաւ, միանգամայն միշտ պատրաստակամ բերելով իր լուսաւոր խորհուրդներն և օժանդակութիւնը Միաբանութեան կարեւոր գործերուն մէջ:

Անցնող ձմեռը իր խիստ սառնամանիքով ծանր հարուած մը տուաւ այդ ժիր անձնաւորութեան, որ փոքրիկ մարմնի մէջ վառվռուն և հանճարեղ հոգի մը ունէր. հարուածը աղղեց սրտին՝ որու տկարութիւնը հետզհետէ յառաջացաւ և այլևս անկարող եղաւ յաղթել ստէյպ կրկնուող նոպաներուն: Ու մեռաւ նա խաղաղիկ, զօրացած սուրբ խորհուրդներով, մինչ լըքուած սրտով իր սնարին քով կը հսկէին աղօթաւոր միաբանակից Հայերը՝ Գերյ. Աբրահամէն մինչեւ յետին վանականը, Աստուծոյ յանձնելով անոր հոգին՝ որ ապրած էր միշտ սիրելով իր Արարիչը բոլոր սրբտով ու իրեն առաքելութիւն ըրած էր սիրցնել զԱնիկա ամէնուն՝ իր խօսքով, օրինակով, աղօթքով:

Եւ այնուհանդերձ որ մեր կղզին զըրկուած է ուղղակի յարաբերութեան Լիտոյի և Վենետիկի հետ, Մայիսի 11ի առաւօտեան հետզհետէ կը խոնուէր հեռուէն ու մօտէն եկող բաղմութիւն մը հաւատացեալներու, բարեկամներու, քաղաքին ու Լիտոյի եկեղեցական և զինուորական իշխանութիւններու ներկայացուցիչներ, իրենց սիրոյ և յարգանքի վերջին տրիտուրն ընծայելու հանդուցեալին:

Չայնաւոր պատարազն և հետեւորդ յուզարկաւորութիւնը բոլորովին յուզիչ էին. ներկայ էին հանդուցեալին մօտաւոր ազգականները՝ եղբոր և քրոջ զաւակները: Թաղմանական թափօրը «Գառնա» ի ծանր ու տխուր ամանակով կը յառաջէր վանքի դարաստանին եղբրքով՝ ծաղիկներու և զաւարտութեան պտակներուն մէջէն

դէպի Մխիթարեան Հայրերու յետին հանգրտարանը աղօթքի եւ խունկի բուրումներով օծուն, եւ ողբացեալ հանգուցեալի ճգնասուն մարմինը կը հանգէր Ալիշանի ու բոլոր վաստակաւոր մեր Հայրերու շիրմներուն քով:

Ողբ. Գեր. Հ. Յովհան Վ. Աւգերեան բոլորովին բացառիկ մեծ տիպար մը կը ներկայանայ իր նկարագրով՝ իր հոգեկան եւ մտաւոր մեծ ձիրքերուն համար:

Իր շնորհալի, խոնարհ ու յանկուցիչ այդ նկարագրով նա խկապէս հմայող էր, եւ շուտով կը դառնար սիրելի եւ մեծարելի, եւ միանգամայն ազդեցիկ՝ իր խօսքին օծութեամբ, մտածութեան ու գաղափարներու բարձր, խոր ու թափանցող զեղեցիկութեամբ: Ու այսպէս անթիւ էին եւ կը բաղմապատկուէին զինքը պաշտամունքով սիրող ու մեծարող բարեկամներ, ազնուականէն մինչեւ ռամիկը, մեծէն մինչեւ փոքրիկը, բարեբախտէն մինչեւ յետին թշուառը, որոնք ամէնքը շնորհք մը, օծութիւն մը, ժպիտ մը, սիրտիանք մը ժառանգած էին իրմէ:

Նա քահանայական իր բարձր կոչումին համեմատ խորապէս ըմբռնած էր կեանքը որպէս անվերապահ նուիրում Աստուծոյ փառքին եւ ընկերին նիւթական ու հոգեւոր բարիքին համար. եւ հոտ էր իր նկարագրին ցայտուն գիծը. եւ մենք կրնանք զինքը որակել ազնուութեան, սիրոյ եւ բարութեան առաքեալ մը, որ իրեն բանաձեւ ըրած էր տէրունական պատգամը «Երանի է մանաւանդ տալն՝ քան զանունըն»:

Եւ իսկապէս, եթէ բախտն ու պարագաները չներեցին որ նա մեր հեռաւոր հայ եղբայրներուն մէջ ապրէր առաքելական ասպարէզով, նա տուաւ ինքզինքը բոլորանուէր եւ գործեց անթիւ բարիք հազարաւոր տեղացիներու: Հիւանդանոցներ, բանտեր ու թշուառներու տուններ

զինքը միշտ այցելու տեսան, ուր նա ամէնուն տարաւ սիրտիանք, ազատութիւն, օգնութիւն, քաջալեր. եւ շնորհիւ իր լայն ու անսպառ ծանօթութիւններուն տեղական ու պետական հեղինակութեանց՝ հարիւրաւորներու հաց դտաւ, զիրք շտկեց, տեղաւորեց, դժուարութիւններ խաղաղեցուց, ընտանիքներ հաշտեցուց, թշուառ ու կորսուած հոգիներու մէջ վերակենդանացուց շնորհքը, Աստուծոյ բարեկամութիւնը եւ յաւիտենական կեանքի անդին եւ անմեռ յոյսը: Եւ այդ աստուածային առաքելութեան մէջ յաջողեցաւ երկար ժամեր աղօթելով, ինքզինքը փակելով խոստովարաններու մէջ՝ ամէնուն բաշխելու Աստուծոյ զթութիւնն եւ շնորհքը: Եւ մենք շատեր կը ճանչնանք որոնք առանց յուզումի չէ որ կը յիշեն զինքը, խոստովանելով թէ անոր կը պարտին իրենց հոգւոյն երջանկութիւնը:

Աւելին կայ: Նա ծանօթ էր իր այդ հրաշալիորդ առաքելութեան մէջ տեղական կղերին, որոնք ամէնէն յուսահատ դիպուածներու լուծումը, հոգիներ առ Աստուած դարձնելու գործը իրեն կը յանձնէին, վստահ թէ պիտի գիտնար յաջողիլ:

Վանական շրջանակին մէջ ալ անշուշտ նուազ չէր իր առաքինի կենցաղին ազդեցութիւնը՝ որ ցայտուն էր իսկապէս իր խոնարհութեան, աստուածաշնորհութեան եւ եղբայրական սիրոյ եւ ազնուութեան մէջ: Մեծ էր իր օրինակը եւ շինիչ: Ոչ ոք զինքը պահ մը դատարկ տեսաւ, կամ լսեց խօսք մը որ գիտութիւն եւ առաքելութիւն չբովանդակէր: Ու հոգեւոր հայրն էր նա զրեթէ բոլոր միաբանակից Հայրերուն, որոնք յարգանքով գիտէին խոնարհիլ իրեն առջեւ եւ օգտուիլ իր օծուն եւ ոգեւորիչ խօսքէն:

Ամէնէն դժուարին հարցերուն համար՝ գիտական, կրօնական, իմաստասիրական, իրմէ կարելի էր միշտ պատրաստ ու գոհացուցիչ լուծում ստանալ:

Գրական վաստակը զոր կը թողու մեզի ողբացեալը՝ թէեւ որակով բարձր, բայց այնքան ալ առատ չէ քանակով. ինչ որ լաւ հասկնալի է անոր վարչական գործերու նուիրումէն եւ մանաւանդ վերեւ ակնարկուած իր առաքելական շարժուն կեանքին հետեւանքով:

Իր զբաղման գործունէութեան համեմատօրէն բեղուն շրջաններն եղած են 1898-1900, 1912-1914 «Բագմավէպ»ի խմբագրութեան մէջ եւ հուսկ վերջին տարիներս, ուր յատուկ ճիգեր չխնայեց՝ ողբ. Հայր Վարդան Վ. Հացունիէն յետոյ՝ վանքիս Հայկական ձեմարանին զարկ տալու եւ երիտասարդ սերունդներուն քաջալեր եւ առաջնորդ ըլլալու՝ յատկապէս ազգային բանասիրական, պատմական եւ այլ մասնաճիւղերու մէջ, որոնց լիովին հմտութիւն ունէր եւ ընդարձակ պաշար: Եւ այսպէս ոչ միայն առաջնորդն եղաւ մերոնց, այլ նաեւ բաղմաթիւ արեւելագէտներու եւ հայկական ու բիւզանդական հարցերով զբաղող ուսումնասէրներու, եւ յատկապէս իտալացի երիտասարդներու համալսարանական աւարտաճառներուն նիւթն եւ գիծը եւ աղբիւրները թելադրելու եւ օգնելու անոնց աշխատութեան բարեօր յորինումին:

Իր թողած զբաղման գործերն են՝ լատիներէն թարգմանութիւնը հայերէն ժամագրքի՝ *Breviarium Armenium, sive Dispositio communium Armeniacae Ecclesiae precum*, (1908), Համառօտ Վարդ Ծառային Աստուծոյ Մխիթարայ (1914), Համառօտ զբաղմանութիւն (1914), որոնցմէ զատ շարք մը Հայկական բանասիրական-պատմական նիւթերու՝ որոնք իսկապէս մնայուն արժէքով քննական ուսումնասիրութիւններ են ընդարձակ եւ հմտալից, սփռուած «Բագմավէպ»ի էջերուն մէջ:

Այսպէս.

Հայր Գուրգիսայ (Լեհահայոց մասին) (1898-1899).

Արցիպոստոսի առասպելն ու Ս. Սարգսի տօնը (Առաջաւորաց պահք եւն.) (1899) «Փառք ի բարձունս» երգը (համեմատութեամբ ասորական - բիւզանդական - հոմմական - ամբրոսեան եւն. բնագիրներու) (1900).

Յովսէփ Գարստի «Պատմական քերականութիւն կիլիկեան հայերէնի» մասին (1900).

Յունարէն թէ լատիներէն (1911).

Ագաթոն կամ Ագադորոն (1913).

Երկդիմակ Յանոսն եւ Յունուար մէկ (1913).

Լատին լեզուն եւ զբաղմանութիւնը նախնաց քով (1909-1910).

Ներսէս եւ Սահակ իշխանապետք Իտալիոյ (1910).

Հայ թագուհի մը Պուլկարիոյ դահուն վերայ (զբուռ մը բիւզանդական միջին դարու պատմութենէն) (1912).

Ռումանահայ Պըյըղլեան Գամինարք (1913) Նմոյշ մը ազգային մանրանկարչութեան եւ հնագրութեան արուեստին (1914).

Սորակալ (1925).

24 Դեկտեմբեր - Թափառական Հրեան (1925).

Ակնարկ մը Ս. Գրոց Հայկական թարգմանութեան վրայ (1935).

Առաքելական քարոզութիւնը Հայոց մէջ (1928-31, - 1940-41).

Քարերու ազգապէս ի պաշտպանութիւն Մովսէսի Խորենացոյ (1937).

Մեմնոն եւ Ջարմայր (1946-1947).

Ու «Հայկական նշխարք»ներու հետաքրքրական շարք մը.

Տակիտոս (էն) (1913).

Ամիանոս Մարկեղինոս (էն) (1913).

Ժամանակագրութիւն Խոնուիլի եւ Բեռնարդ դանձապետի (1913).

Michaud (էն) (1915).

Աբրահամ (էն) (1915).

Լիվոնոյի Հայոց բողոքադիրը առ Ծիր. Orsini (1915).

Մատթէոս Ուռհայեցի եւ Սաչակրաց Ժամանակագիրը (1916) .

Մոռցուած յուշարձան մը (Վենետիոյ Օրսէոյ տոժին Յովհաննէս օրդույն ա-մուսնութիւնը Վասիլ Բ. արչակունիի քեռազուտար Մարիամ արչակունիի հետ) (1918) .

Croce bianca in campo rosso (= Սպիտակ խաչ կարմիր խորքի վրայ = Սաւոյիոյ տան զինանշան), (Ուսումն. Կիլիկեան «Հայոց թագաւոր» տիտղոսին դործածութեան Սաւոյիոյ իշխաններէն, զրամներ եւն.) (1925) .

Հոս կարելի է յիշել նաեւ աշխատակցութիւնը իտալական «Treccani» մեծ Հանրագիտակին, ինչպէս իտալական այլ թերթերու՝ Հայ կեանքն ու հայ հին յիշատակները ծանօթացնելու :

Պատրաստած է Հայ Եկեղեցւոյ «Շա-

րակնոց»ին ալ լատիններէն թարգմանութիւնը, ինչպէս արուճանակը Փոքր Ասիոյ հին ազգերու պատմութեան եւն., եւ զանազան ծրագիրներ, ինչպէս Հայկազեան բառարանի նոր տպագրութիւնը լեզուաբանական արդի պահանջներուն համեմատ, Հայ յատուկ անուններու բառարան եւ Հայկական հանրագիտակ :

Երբ այս համեստ տողերը կը յանձնենք մամուլին՝ ի յարգանս Հանգուցեալին եւ իր թանկագին յիշատակին անմահութեան համար, կը մաղթենք յաւիտեանական երանութիւն իր սրբասուն եւ ազգասէր հոգւոյն՝ որ իր մեծ առաքինութեան օրինակներով պիտի շարունակէ ապրել մեր մէջ ու քաջալերել նուիրուելու սրբազան դաւադիրներուն համար՝ որոնք կնիքն եւ ուխտը կը կազմեն իր սիրած Միւթարեան Ուխտին :

Հ. Ե. Փ.

ՇՆՈՐՀԱՆԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ «ԲԱԶՄԱՎԵՊ»-Ի ՀԻՄՆԱԳԻՐԱՄԻՆ ՀԱՄԱՐ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ .

ՏԻՍՐ Լ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ (ՆԻԷ ԵՊՐԲ) ՏՈՒՐ 200
Ե Ք. ՄԱՐՏԵԱՆ

ՏԻՍՐ Լ. Զաւեան (ՆԻԷ ՃԵՐԳԻ) » 50
ՏԻՍՐ Գալուստ Կիւլպէնկեան

(ՆԻԷ ԵՊՐԲ) » 50

ՏԻՍՐ Միսաք Ճիկէրճեան (Պոսթոն) » 5

Համագում. 305

ՄԵԿ ՏԱՐՈՒԱՆ ԲԱԶՄԱՎԵՊ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՏԻՍՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՏԵԱՆ (Ուիլիթա Գանդաս) Սահմանելի խմբագրութեանս կողմէ .

1. Մեքսիկեան վարժարանին (Պէյրուի) .
2. Սէն Կրասիէնի Հայ Որբանոցին .
3. Դպրոցաւորաց-ի տեսչութեան .
4. Տիար Ահարոն Տատուրեանի .
5. Հայ Մշակ. Տան (Պուրթէ) :

ՏԻՍՐ ԱՐՍԷՆ ՆԱԳԱՇԵԱՆ (St. Paul) Կ'արձա-նագրութի բաժանորդ եւ կը նուիրէ իր բարեկամներէն .

1. Տիար Նշան Համբարձում (Ուոթըրթաուն)
2. » Տրդատ Տէմիրճեանի (Միլան)
3. Հ. Մ. Բ. Մ. -ի ահումբին (Հալէպ)
4. St. Paul Public Library (St. Paul, minn)

ՏԻՍՐ ԱՐԱՄ ՍԱՀԱԿԵԱՆ (Պուլէնոս Այրէս) Կ'արձանագրութի բաժանորդ եւ կը նուիրէ իր բարեկամներէն .

1. Տիար Բարունակ Սանտալճեանի (Պուլէնոս Այրէս)
2. Տիար Յակոբ Քարտաշեանի (Պուլէնոս Այրէս)
3. » Արամ Տոնիկեանի (Պուլէնոս Այրէս)
4. » Մկրտիչ Արսլանեանի (Միլան)

ՏԻՍՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԻՍՐՊԵՔԻՐԵԱՆ (Պուլէ-նոս Այրէս) Կ'արձանագրութի բաժանորդ եւ կը նուիրէ .

1. Տիար Սարգիս Տիարպէրեանի (Միլան)
2. » Կարապետ Տիարպէրեանի (Միլան)
3. » Յովհաննէս Յովակիմեանի (Միլան)

4. » Յակոբ Յովակիմեանի (Միլան)
5. » Մանուկ Երրինեանի (Պուլէնոս Այրէս)
6. » Յովհան Ստեփանեանի (Պուլէնոս Ա.)
7. » Աւօ Հարենցի (Պուլէնոս Այրէս)
8. » Եղուարդ Գարամեանի (Պուլէնոս Ա.)
9. » Ա. Պահակեանի (Պուլէնոս Այրէս)

ՏԻՍՐ ՍՏԵՓԱՆ Ս. ՏԵՄԻՐՃԻԱՆ (Կիւլպէն-կէ) կը նուիրէ

Տիար Սարգիս Տէմիրճեանի (Լոնկ Այրէս)

ՏԵԱՐՔ ԱՐՍԼԱՆԵԱՆ ԵՂԱՅԵՐԵՐԸ (Ուո-թըրթաուն) կը նուիրեն

Տիար Եղուարդ Մորէանի (Սըմըրվել)

Խմբագրութիւնս իր խորին շնորհակալու-թիւնը կը յայտնէ Տիար Երմոլք Լաչիկեանի եւ իր մօր Սյունուհի Լաչիկեանի, ինչպէս նաեւ Տիար Փանոս Լօրենքեանի (Պուլէնոս Այրէս) իր ներկայացուցչներուն՝ իրենց թափած ջան-քերուն համար ի նպաստ «Բազմավէպ»ի ծա-ւալման :

ՀԱՅ ՏԵՍԱԻ

POESIE

in lingua armena di

VAHAN HOVHANNESIAN

Tradotte dall'Autore e rese in versi sciolti Italiani da

FILIPPO BASLINI

Pag. 268

Prezzo netto L. 250

“ԲԱԶՄԱՎԵՊ”-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

ԵԳԻՊՏՈՍ Հ. Քերրէ վ. Զրաքեան, Միսր. վարժարան Աղեքսանդրիոյ,
18 Rue Station, Shutz.

ՀԱՆԿՊ Հ. Եսայի Գուրգեան Միսրաթեան վարժարան Հալէպի
Հ. Ա. Կաթ Ծովեան

ՓԱՐԻԶ - Պր. Բարգէն Պոստեան, 22 Rue Stendhal, Paris (20)
Բաժնեգինի վճարումը կատարել կամ Պր. Բարգէն Պոստեանին կամ Սեյրի Մուրատեան վարժարանի Մատակա-րարութեան. C. C. P. 555.84

ԼՈՆՏՐՈՆ - Պր. Արշակ Սաֆրաստեան, 18 Eton Villas, London N. W. 3.

ՊՈՍԹՐՆ - Պր. Ենովք Լաչիկեան, 268 Northampton St. Boston 18, Mass.

ՊՈՒԵՆՈՍ ԱՅՐԷՍ - Պր. Փանոս Լօրենքեան, C. nel Niceto Vega 5531.

ՄԻԼԱՆ - Օր. Պերճուհի Պողոսեան, Viale Porta Vercellina 1, Milano.

